

Հարցաշար
Առարկայական օլիմպիադայի
«Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի
մարզային փուլ
11-րդ դասարան

№ 1-8

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. *Աստված ո՞ւմ միջոցով մարդկանց փոխանցեց Տասը պատվիրանները.* (0,5 միավոր)

- 1) Սողոմոնի 2) Սավուղի 3) Աբրահամի 4) Մովսեսի

2. *Հիսուս Քրիստոսի առաքյալներից ո՞վ ընտրվեց վիճակահանությամբ.* (0,5 միավոր)

- 1) Բարդուղիմեոսը 2) Թադեոսը 3) Պետրոսը 4) Մատաթիան

3. *Ո՞ր քաղաքում է գտնվում Սյունյաց թեմի առաջնորդանիստ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին:* (0,5 միավոր)

- 1) Գորիս 2) Սիսիան 3) Կապան 4) Մեղրի

4. *Պսակի խորհրդի ընթացքում նորապսակների գլխին դրվող թագերը խորհրդանշում են.* (0,5 միավոր)

- 1) որ նրանք կյանքի ուրախությունների և դառնությունների ժամանակ պետք է անբաժան լինեն
2) որ նրանք համատեղ կյանքի ընթացքում պետք է պահպանեն հավատարմությունը պսակադրության ուխտին
3) որ նրանք համատեղ կյանքի ընթացքում պետք է նյութական բարիքներ արարեն
4) որ նրանց միությունը պետք է անխախտ լինի

5. *Ե՞րբ է ստեղծվել Ղարաբաղի մետրոպոլիտությունը.* (0,5 միավոր)

- 1) 1805 թ. 2) 1813 թ. 3) 1815 թ. 4) 1828 թ.

6. *Ստորև թվարկված վանքերից ո՞րն է գտնվել Շիրակում:* (0,5 միավոր)

- 1) Նարեկավանք 2) Դպրեվանք 3) Նորավանք 4) Գոշավանք

7. *Ո՞ր ուսմունքի համաձայն է մարդը համարվում «տիեզերքի քաղաքացի».* (0,5 միավոր)

- 1) նիհիլիզմ 2) էվոլյուցիոնիզմ 3) կոսմոպոլիտիզմ 4) հեղոնիզմ

8. *Ե՞րբ է վերահաստատվել Հայոց եկեղեցու Արցախի թեմը.* (0,5 միավոր)

- 1) 1988 թ. 2) 1989 թ. 3) 1990 թ. 4) 1991 թ.

№ 9-12

Կառուցված պատասխանով առաջադրանքներ

9. *Ըստ Ծննդոց գրքի՝ Հայկական լեռնաշխարհից են սկիզբ առել աստվածաշնչյան չորս գետերը՝ Եփրատը, Տիգրիսը, Փիսունը և _____ (1 միավոր):*

10. -----ը գրել է. «Մինչև որ ժողովուրդը չվարժվի անձնագոհության, չի ունենա իր ազատությունը, մինչև որ ժողովուրդը չվարժվի իր ետք ենթարկելու համայնքին, չի ունենա իր պետականությունը»: (1 միավոր)
11. Հայկական մանրանկարչության առաջին հայտնի հնագույն նմուշները 989 թ. ----- վերջում կցված երկու թերթերի չորս տերունական մանրանկարներն են, որոնց հնությունը հասնում է VI դար: (1 միավոր)
12. Սուրբ ----- գրում է. «Շնորհ տալը Աստծու գործն է. այն պահելն ու պահպանելը՝ քոնը»: (1 միավոր)

№ 13-14

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից

13. Տոնը համապատասխանեցնել նրա հետ կապված իրադարձության վայրին. (1 միավոր)

- 1) Սուրբ Ծնունդ
- 2) Համբարձում
- 3) Ծաղկազարդ
- 4) Պայծառակերպություն

1	
2	
3	
4	

- ա) Թաբոթ լեռ
- բ) Երուսաղեմ
- դ) Բեթղեհեմ
- ե) Նազարեթ

14. Հեղինակի անունը համապատասխանեցնել աշխատության վերնագրին. (1 միավոր)

1. Վարդան Այգեկցի
2. Ստեփանոս Օրբելյան
3. Մկրտիչ Ա. Խրիմյան
4. Խ. Գրիգոր Ա. Լուսավորիչ
5. Խ. Հովհաննես Գ. Օձնեցի
6. Խ. Գրիգոր Նարեկացի

1	
2	
3	
4	
5	
6	

- ա) «Հաճախապատում»
- բ) «Մատյան ողբերգության»
- գ) «Կնիք հաւատոյ»
- դ) «Գիրք հաստատութեան և արմատ հաւատոյ»
- ե) «Ընդդէմ պավլիկյանների»
- զ) «Դրախտի ընտանիք»
- է) «Սուրբ Կաթողիկէի ողբը»

№ 15-17

Աշխատանք սկզբնաղբյուրով

15. «Ժողովուրդը, եթե առաջադիմում է, ապա իր առաջին քայլերն առնում է ընտանեկան սրահից, եթե լուսավորվում է, իր լույսն ընտանեկան ճրագից է, եթե հզորանում է, իր ոգին ու կապն ընտանիքն է, եթե հզորանում է իր ուժն ու բազուկը ընտանիքից է, եթե հարստանում է իր գանձն ու գանձապետն ընտանիքն է»:
Ո՞վ է մեջբերված հատվածի հեղինակը: (1 միավոր)

16. «Բնավորությամբ բարի էր նա, աղքատների ու կարոտյալների հանդեպ ողորմած, եկեղեցու ու Աստծու սպասավորների նկատմամբ սիրալիր: Վանքեր էր հաստատում իր տերության բոլոր կողմերում ... : Նրա հաստատած վանքերից մեկն էր Ակներ կոչված հռչակավոր վանքը»:

Ո՞ւմ է բնութագրում պատմիչն այս խոսքերով: (1 միավոր)

17. «...Այսօր իմ բոլոր մտածումները, մաղթանքները և սպասումներն ուզում եմ արտահայտել մեկ ամփոփ բանաձևումով, որն ընդունված է մեր եկեղեցու կյանքում: Այդ է՝ «Ազատություն յերկրայականս, միություն ի կարելորս եւ սեր յընդհանուրս»: ...Մենք բոլորս, դուք բոլորդ մեկ ազգի հարազատ զավակներն ենք, ամեն բանից վեր և անկախ բոլոր տեսակետներից և գաղափարական դիրքորոշումներից: Ի սկզբանե մենք մեկ ազգ ենք և, հետևաբար, նույն ազգի զավակներն ենք, համախմբված սուրբ Արարատի լանջերի շուրջ հազարավոր տարիներ է ի վեր, նախաստեղծման օրերից սկսյալ»:

1. Ո՞վ է այս խոսքերի հեղինակը: (1 միավոր)

2. Եր՞բ են ասվել այս խոսքերը (1 միավոր)

№ 18-19

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ՝ 2 ճիշտ պատասխանով

18. Հոգևոր բարեպաշտական արարողությունների և սովորույթների վերաբերյալ բերված պնդումներից ո՞ր երկուսն են սխալ.

(2 x 1 = 2 միավոր)

- 1) Անդաստանը աշխարհի չորս ծագերի օրհնության արարողություն է:
- 2) Խնկարկությունը խորհրդանշում է առ Աստված բարձրացող աղոթքն ու օրհնությունը:
- 3) Տնօրինքի ժամանակ քահանան օրհնում է հացը, ջուրը, աղը և տան հիմքերը:
- 4) Հոգեհանգստյան արարողության վերջում՝ «Քրիստոս, որդի Աստուծոյ» աղոթքի ընթացքում, հիշատակվում են ննջեցյալների անունները:
- 5) Անդաստանը կատարվում է, երբ պատարագի ընթացքում ասվում է «Աստուծոյ երկրպագեացուք»:
- 6) Մատաղն արգելված է պահոց օրերին:

19. Ստորև թվարկված Հայ Առաքելական Եկեղեցու սպասավորներից ովքե՞ր են մասնակցել Խանասորի նշանավոր արշավանքին: (1 x 2 = 2 միավոր)

- 1) Եղիշե քահանա Խաչատրյան
- 2) Հակոբ քահանա Սառիկյան
- 3) Բագրատ վարդապետ Թավաքալյան
- 4) Գևորգ վարդապետ Նալբանդյան (Ընծայր վարդապետ)
- 5) Վարդան վարդապետ (Հետու վարդապետ)
- 6) Գրիգոր քահանա Ավագյան
- 7) Խորեն վարդապետ Վարդանյան
- 8) Ներսես եպիսկոպոս Խարախանյան

№ 20

Շարադրանք (2 միավոր)

20. Ներկայացրե՛ք հայ ընտանիքը: Ձեր կարծիքով՝ ազգային-քրիստոնեական արժեքների պահպանումն ընտանիքում ինչպե՞ս կարող է նպաստել հայ տեսակի պահպանմանն ու հարատևմանը: